# «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ**

**Գ Լ ՈՒ Խ 1.**

***ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ***

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է հանրաքվեի անցկացման սկզբունքների, հանրաքվեին մասնակցելու իրավունքի, հանրաքվեի դրվող հարցերի և այն հարցերի, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի, նախագիծը հանրաքվեի դնելու կարգի, հանրաքվեի դրվող նախագծի հրապարակման, հանրաքվեի նշանակման, կազմակերպման, արդյունքների ամփոփման և հանրաքվեի հետ կապված այլ հարաբերությունները:

**Հոդված 2. Հանրաքվեի անցկացման սկզբունքները**

1. Հանրաքվեն ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանության իրականացումն է: Հանրաքվեն անցկացվում է ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:
2. Յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայնի իրավունք:
3. Հանրաքվեն անցկացվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

**Հոդված 3. Հանրաքվեին մասնակցելու իրավունքը**

1. Հանրաքվեին կարող են մասնակցել հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:
2. Հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական

ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

**Հոդված 4. Հանրաքվեի դրվող հարցերը**

1. Հանրաքվեի են դրվում՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը,
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններ կատարելու նախագիծը,
- վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը:

2. Հանրաքվեի կարող են դրվել՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում չնախատեսված հոդվածներում փոփոխություններ կատարելու նախագիծը, եթե այն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից չի ընդունվել,
- քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագիծը (օրենքների նախագծերի փաթեթը):

**Հոդված 5. Հարցեր, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի**

1. Հանրաքվեի չեն կարող դրվել՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածներում փոփոխություններ նախատեսող Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծերը,
- այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, միջազգային պայմանագրերին,
- այն նախագծերը (հարցերը), որոնք արդեն իսկ դրվել են հանրաքվեի նախորդ մեկ տարվա ընթացքում (ըստ էության նույնաբովանդակ են),
- հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող օրենքի նախագծերը, եթե օրենքի ընդունումից չի անցել առնվազն մեկ տարի:

**Հոդված 6. Հանրաքվե անցկացնելու արգելքը ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ**

1. Հանրաքվե չի կարող անցկացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ (անկախ ռազմական կամ արտակարգ դրությունն ընդգրկող տարածքի չափից):
2. Հանրաքվե կարող է նշանակվել ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան մեկ ամիս անց:
3. Այն դեպքում, երբ ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է հանրաքվեի կազմակերպման և անցկացման՝ սույն օրենքով նախատեսված գործընթացը սկսելուց հետո, ապա հանրաքվեի կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր միջոցառումները և ժամկետները կասեցվում են և վերսկսվում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից մեկ ամիս անց:

**Գ Լ ՈՒ Խ 2.**

***ՀԱՐՑԸ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴՆԵԼԸ***

**Հոդված 7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու կարգը**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավունք ունեն՝

- պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը,
- Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
- ընտրական իրավունք ունեցող առնվազն երկու հարյուր հազար քաղաքացի:

2. Նախագիծը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, որը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով երկամսյա ժամկետում քննարկում է նախագիծը և կայացնում որոշում: Նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության և պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնած նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկման արդյունքում կարող է փոփոխվել նախաձեռնողների համաձայնությամբ, իսկ քաղաքացիների նախաձեռնած նախագիծը կարող է փոփոխվել բացառապես

օրենսդրական տեխնիկայի պահանջների ապահովման համար:

### Հոդված 8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների (սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված փոփոխությունների) նախագիծը հանրաքվեի դնելու կարգը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավունք ունեն՝

1) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

3) ընտրական իրավունք ունեցող առնվազն երկու հարյուր հազար քաղաքացի:

2. Նախագիծը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, որը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով երկամսյա ժամկետում քննարկում է նախագիծը և այն ներկայացնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան՝ նախագծի սահմանադրականությունը պարզելու համար:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության և պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնած նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկման արդյունքում կարող է փոփոխվել նախաձեռնողների համաձայնությամբ, իսկ քաղաքացիների նախաձեռնած նախագիծը կարող է փոփոխվել բացառապես օրենսդրական տեխնիկայի պահանջների ապահովման համար:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում նախագծի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության մասին որոշում ընդունելու դեպքում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշման կայացումից հետո 15-օրյա ժամկետում որոշում է ընդունում նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը չհամապատասխանելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում նախագիծը հանրաքվեի չի դրվում:

## Հոդված 9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների (սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված փոփոխություններ) նախագիծը հանրաքվեի դնելու կարգը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի է դրվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ, եթե նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, սակայն դրա ընդունումը մերժվել է:
2. Նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից նախագիծը մերժվելուց հետո 1-ամսյա ժամկետում:

## Հոդված 10. Օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու կարգը

1. Եթե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը մերժում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո` վաթսուն օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը դիմում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ` ԿԸՀ)` ստորագրությունների վավերականության հաստատման համար:
2. ԿԸՀ-ի կողմից քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով հաստատվելու դեպքում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը` ԿԸՀ-ի որոշումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում դիմում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան` նախագծի սահմանադրականությունը պարզելու նպատակով:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից օրենքի նախագծի` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը չհամապատասխանելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում այն հանրաքվեի չի դրվում:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում նախագծի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության մասին որոշում ընդունելուց հետո` եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության նախագահը նշանակում է

hանրաքվե:

5. Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով:

**Հոդված 11. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը հանրաքվեի դնելու կարգը**

1. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցով հանրաքվե անցկացնելու վերաբերյալ առաջարկությունը Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:
2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով մեկամսյա ժամկետում քննարկում է առաջարկությունը և հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումն ընդունում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

**Հոդված 12. Հանրաքվեի դրվող հարցի հրապարակումը, հանրաքվեի նշանակումը և անցկացումը**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշում ընդունելուց հետո` եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե:
2. Հանրաքվեն անցկացվում է հանրաքվե նշանակելուց ոչ շուտ, քան 50 և ոչ ուշ, քան 65 օր հետո:
3. Հանրաքվե չի նշանակում, եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը անհամապատասխանության վերաբերյալ:
4. Հանրաքվեի դրվող հարցը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության Նախագահի և ԿԸՀ-ի պաշտոնական կայքերում, http://www.azdarar.am կայքում, «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», ինչպես նաևպետական մարմինների հիմնած զանգվածային լրատվության միջոցներով հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ:

**Գ Լ ՈՒ Խ 3.**

**ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ**

**Հոդված 13. Ստորագրությունների հավաքագրումը**

1. Օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը քաղաքացիների միացման համար կազմավորվում է նախաձեռնող խումբ՝ առնվազն 50 անձից բաղկացած:
2. Նախաձեռնող խումբը գրանցման համար ԿԸՀ է ներկայացնում նախաձեռնող խմբի անդամների անձնագրային տվյալները, նախաձեռնության լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը, ինչպես նաև համապատասխան օրենքի նախագիծը:
3. ԿԸՀ-ն 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նախաձեռնող խմբին կամ մերժում է գրանցումը, եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներն պահպանված չեն:
4. Գրանցման դեպքում նախաձեռնող խմբի ներկայացրած նախագիծը և նախաձեռնող խմբի գրանցման վերաբերյալ տեղեկատվությունն անհապաղ տեղադրվում է ԿԸՀ-ի պաշտոնական կայքում:
5. Գրանցումից հետո նախաձեռնող խումբն իրավունք է ստանում ձեռնարկել օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը քաղաքացիների միացումը՝ ստորագրությունների հավաքագրման միջոցով:
6. Սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված դեպքերում օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը քաղաքացիների միացումը կարող է իրականացնել նաև արդեն իսկ գրանցված այն նախաձեռնող խումբը, որը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին առաջարկել էր օրենքի նախագիծը:
7. Ստորագրությունների հավաքագրմանը (նախաձեռնել, կազմակերպել, օժանդակել) կարող է մասնակցել 16 տարին լրացած յուրաքանչյուր ոք:
8. Ստորագրել կարող են միայն ստորագրելու պահին հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք:
9. Ստորագրությունների հավաքագրումն իրականացվում է ստորագրությունների հավաքագրման ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:
10. Տեղում ստորագրելու դեպքում անձը ձևաթերթիկում նմուշը տեղադրվում է ԿԸՀ-ի պաշտոնական կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ անձամբ (ձեռագիր) լրացնում է իր տվյալները և ստորագրում: Անձամբ ստորագրելու ունակություն չունեցող անձ համարվելու չափանիշները և ստորագրելու կարգը սահմանում է ԿԸՀ-ն:
11. Էլեկտրոնային փոստին ուղարկելու դեպքում անձը ներբեռնում է անհատական ձևաթերթիկ (նմուշը տեղադրվում է ԿԸՀ-ի պաշտոնական

կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ), անձամբ լրացնում այն (ձեռագիր), ստորագրում, լուսապատճենում և էլեկտրոնային եղանակով ուղարկում նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստին: Անհատական ձևաթերթիկը լրացնելու համար կարող է օգտագործվել նաև անձի էլեկտրոնային ստորագրությունը:

12. Ստորագրությունների հավաքագրումն իրականացվում է նախաձեռնող խմբի գրանցումից հետո եռամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված դեպքի:

**Հոդված 14. Ստորագրությունների վավերականության հաստատումը**

1. Սույն օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պահանջվող նվազագույն քանակի ստորագրություններ հավաքագրելու դեպքում, ոչ ուշ, քան այդ ժամկետը լրանալուն հաջորդող 15-րդ օրը, նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը դիմում է ԿԸՀ՝ ներկայացնելով ստորագրված ձևաթերթիկները:
2. ԿԸՀ-ն մեկամսյա ժամկետում իրականացնում է ստորագրությունների վավերականության ստուգում:
3. ԿԸՀ-ն ստուգման արդյունքում որոշում է կայացնում ստորագրությունների վավերականությունը հաստատելու մասին, եթե առկա են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պահանջվող քանակի վավեր ստորագրություններ, իսկ հակառակ դեպքում մերժում է ստորագրությունների վավերականության հաստատումը:
4. ԿԸՀ-ն ստորագրությունների վավերականությունը հաստատելու կամ հաստատումը մերժելու վերաբերյալ որոշման կայացումից հետո 3-օրյա ժամկետում որոշումն ուղարկում է քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցչին:
5. Սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը ստորագրությունների վավերականությունը հաստատելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում համապատասխան նախագիծը ներկայացնում է Ազգային ժողով:
6. Ստորագրությունների վավերականության հաստատումը մերժելու որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:
7. Ստորագրությունների հավաքագրման և վավերականության ստուգման մանրամասները սահմանում է ԿԸՀ-ը:
8. Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի կողմից ՀՀ Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության շրջանակում օրենքի նախագիծ առաջարկելու դեպքում, ինչպես նաև ընտրական իրավունք ունեցող առնվազն երկու հարյուր հազար քաղաքացու կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության դեպքում ստորագրությունների հավաքագրումը և վավերականության ստուգումը իրականացվում է սույն օրենքի 13-րդ և 14-րդ հոդվածներով սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 4.

## *ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ*

### Հոդված 15. Հանրաքվեի հանձնաժողովների համակարգը

1. Հանրաքվեի կազմակերպումն ու անցկացումն ապահովում են ԿԸՀ-ն, տարածքային ընտրական հանձնաժողովները և տեղամասային ընտրական հանձնաժողովները (բոլորը միասին այսուհետ՝ հանձնաժողովներ):
2. Հանրաքվեի կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար հանձնաժողովներն իրականացնում են սույն օրենքով նախատեսված լիազորությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների ժամանակ հանձնաժողովներին հանրաքվեի կազմակերպման և իրականացման համար վերապահված լիազորությունները:
3. Հանրաքվեի ժամանակ հանձնաժողովների գործունեության և ֆինանսավորման կարգը, հանձնաժողովների անդամների կարգավիճակը, հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման կարգը, հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների քննարկման և քվեարկության արդյունքների վերահաշվարկման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգին համապատասխան:

### Հոդված 16. Կազմակերպչական միջոցառումներ

1. Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները կազմելու և վարելու, քաղաքացիներին ցուցակներում ընդգրկելու կարգը, ցուցակներին առաջադրվող պահանջները, ցուցակների մատչելիությունը, ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելու և ցուցակները ճշտելու, հանձնաժողովներին ցուցակներ տրամադրելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգին համապատասխան:
2. Հանրաքվեի տեղամասերը և տեղամասային կենտրոնները կազմավորվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
3. Հանրաքվեի կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական

ընտրությունների համար սահմանված կարգին համապատասխան:

**Գ Լ ՈՒ Խ 5.**

## ***ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ***

### **Հոդված 17. Քարոզչության հիմնական կանոնները**

1.Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ օրենքով չարգելված ձևերով և միջոցներով քարոզչություն կատարելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, հանրաքվե անցկացնելու նախաձեռնության հեղինակը, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները և հասարակական միավորումները բացառությամբ բարեգործական և կրոնական կազմակերպությունների: Քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

2. Քարոզչությունն սկսվում էհանրաքվեանցկացնելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

3.Արգելվում է քարոզչություն կատարել `

1) անանուն քարոզչական նյութեր տարածելը: Անանուն կամ կեղծ քարոզչական նյութեր հայտնաբերելու դեպքում իրազեկ հանրաքվեի հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ` ապօրինի գործողությունները դադարեցնելու համար,

2) հանրային ծառայողներին, այդ թվում քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնողների, ինչպես նաև ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին` իրենց պարտականությունները իրականացնելիս,

3) դատավորներին, դատախազներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, պրոբացիոն ծառայության ծառայողներին, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողներին, զինծառայողներին,

4) հանրաքվեի հանձնաժողովի անդամներին,

5) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին:

4. Արգելվում է`

1) քարոզչություն կատարողներին` քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը քաղաքացիներին ցանկացած

եղանակով անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ,

2) քվեարկության և դրան նախորդող օրը հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների վրա ազդեցություն գործելը բանավոր կամ գրավոր ձևով, երաժշտության կամ պատկերավոր միջոցների օգնությամբ, ստորագրություններ հավաքելը, ինչպես նաև այլ եղանակներով հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչություն իրականացնելը,

3) քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը,

4) քվեարկությունից հետո քվեարկած անձանց ցուցակները հրապարակելը:

5.Հանրաքվեի հանձնաժողովները հսկում են քարոզչության համար օրենքով սահմանված կարգի պահպանումը: Դրա խախտման դեպքում հանձնաժողովները դիմում են իրավասու մարմիններ` դրանք կանխելու, ինչպես նաև իրավախախտ անձին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը` անկախհանրաքվեի հանձնաժողովի պահանջից:

**Հոդված 18. Քարոզչության իրականացման եղանակները**

1. Քարոզչությունը կարող է կատարվել զանգվածային լրատվության միջոցներով, հրապարակային քարոզչական միջոցառումների ձևով (ժողովներ, հանդիպումներ, հրապարակային քննարկումներ, բանավեճեր, հավաքներ), քարոզչական պաստառներ, թերթիկներ, տպագիր նյութեր հրապարակելու, ձայնագրված և նկարահանված նյութեր տարածելու միջոցով:
2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հավասար և անվճար հիմունքներով ապահովվում են ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով քարոզչություն կատարողներին դահլիճների և այլ շինությունների տրամադրումը: Դրանց տրամադրման կարգը սահմանվում է ԿԸՀ-ի կողմից:
3. Հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո մարզպետը, Երևանում` Երևանի քաղաքապետը ԿԸՀ են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք ԿԸՀ կողմից սահմանված կարգով անվճար տրամադրվում են քարոզչություն կատարողներին` ժողովներ, հանդիպումներ ևհանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Այդ ցանկը

տեղադրվում է ԿԸՀ-ի պաշտոնական կայքում:

4. Հանրաքվեին դրված հարցին «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչություն իրականացնող կողմերին (այսուհետ նաև քարոզչության կողմեր) սույն մասով նախատեսված տարածքները պետք է տրամադրվեն հավասար պայմաններով: Դրանց գտնվելու վայրերը պետք է այնպես սահմանվեն, որպեսզի քարոզչության կողմերի համար ապահովվի քարոզչության արդյունավետ իրականացում, էականորեն չնվազի քարոզչության ազդեցությունը կամ որևէ այլ կերպով հանգեցնի արդյունավետ քարոզչություն իրականացնելու փաստացի արգելքի:
5. Քարոզչության իրավունք ունեցող անձինք կարող են օրենքով չարգելված ձևով հրապարակել և տարածել պաստառներ, թերթիկներ և քարոզչական այլ տպագիր նյութեր: Քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ պարունակեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ:
6. Քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքների ղեկավարները,հանրաքվեանցկացնելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, հատկացնում են հատուկ դրանց փակցման համար նախատեսված տեղեր: Համայնքի ղեկավարները հետևում են, որ հատուկ տեղերում փակցված պաստառները չպոկվեն:
7. Քարոզչության կողմերին հատկացված տեղերը պետք է հարմար լինեն քվեարկողների այցելության համար, ապահովեն հավասար մակերես «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության համար, և պետք է լինեն այնպիսին, որէականորեն չնվազեցնեն քարոզչության ներգործությունը հանրության վրա կամ որևէ այլ ձևով հանգեցնեն քարոզչության փաստացի արգելմանը կամ նվազեցնեն քարոզչության արդյունավետությունը:
8. Քվեարկության օրը և նրա նախորդ օրը տեղամասային կենտրոնում չգտնվող պաստառները կարող են մնալ իրենց տեղերում:
9. Զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող քարոզչության նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների նախընտրական քարոզչության համար սահմանված կանոնները, եթե սույն օրենքով այլ բան սահմանված չէ: Քարոզչության կողմերին զանգվածային լրատվության միջոցներով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը, ժամերի քանակը և ժամանակացույցը սահմանում է ԿԸՀ-ն եթերաժամ տրամադրելու համար սահմանված ժամկետից առնվազն հինգ օր առաջ: Եթերաժամերի ժամանակացույցը պետք է սահմանվի այնպես, որ ապահովվի քարոզչության կողմերի համար հավասար հնարավորություններ, էականորեն չնվազեցնի քարոզչության ներգործությունը հանրության վրա կամ որևէ այլ ձևով հանգեցնի քարոզչության փաստացի արգելմանը կամ նվազեցնի քարոզչության արդյունավետությունը:
10. Քարոզչության կողմերին զանգվածային լրատվության միջոցներով քարոզչության համար տրամադրվող վճարովի և անվճար ժամերի քանակը պետք է հավասար լինի: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն իրավունք ունի`

1) անվճար օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի,

քան 60 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից` ոչ ավելի, քան 120 րոպե,

2) վճարովի հիմունքներով օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից` ոչ ավելի, քան 180 րոպե` քարոզչության հիմնադրամի միջոցների հաշվին:

11.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության եթերաժամերից կարող են օգտվել` սկսած քվեարկության օրվանից 30 օր առաջ:

12.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները վճարովի և անվճար եթերաժամը տրամադրվում է դաշինքի կողմից եթերաժամ տրամադրողին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա:

13. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման ժամանակ զանգվածային լրատվության միջոցները պարտավոր են նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատուին:
14. Արգելվում է հանրաքվեի անցկացման օրը` մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններին կամ հեռուստաընկերություններին հրապարակելհանրաքվեի մասնակիցների հարցման արդյունքներն այն մասին, թեհանրաքվեի դրված հարցին «ԱՅՈ» կամ «ՈՉ» են քվեարկել:

**Հոդված 19. Քարոզչությանը պետական մարմինների մասնակցությունը**

1. Քարոզչությանը, որպես քարոզչության կողմ կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, եթե սույն օրենքով սահմանված կարգով հանդիսանում են հանրաքվեի նախաձեռնող: Այս դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վրա տարածվում են քարոզչության կողմերի համար` սույն օրենքով սահմանված կարգավորումները:

**Հոդված 20. Քարոզչության ֆինանսավորման հիմնադրամը**

1. Քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձինք կարող են ստեղծել քարոզչության հիմնադրամ` քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով: Քարոզչության ֆինանսավորման նկատմամբ տարածվում են նախընտրական հիմնադրամներին վերաբերող Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթները, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: Այն դեպքում, երբ հանրաքվեի անցկացման նախաձեռնող են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովը, քարոզչության հիմնադրամը ձևավորվում է պետական բյուջեի միջոցներով, որը չի կարող գերազանցել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ընդհանուր գումարի չափը:

2. Հիմնադրամի միջոցները հավաքվում են քարոզչության իրավունք ունեցող անձի տված գրավոր դիմումի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված հատուկ հաշվին դրամական փոխանցում կատարելու միջոցով:
3. Հիմնադրամն ստեղծվում է անձնական միջոցներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց կամավոր մուծումներից:
4. Հիմնադրամում մուծումներ կատարելու իրավունք չունեն՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինները,

2) բյուջետային հիմնարկները (կազմակերպությունները),

3) օտարերկրյա պետությունները, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք,

4) քաղաքացիություն չունեցող անձինք,

5) բարեգործական, կրոնական, միջազգային կազմակերպությունները,

6) բաժնետիրական կապիտալում 30 տոկոսից ավելի օտարերկրյա բաժնեմաս ունեցող կազմակերպությունները,

7) պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և պետական ու համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները:

5. Հիմնադրամի հաշվում կատարված մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 100000-ապատիկը: Քարոզչության հիմնադրամ կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների մուծումների չափը յուրաքանչյուրի համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 25000-ապատիկը: Նրանցից յուրաքանչյուրը կարող է կատարել մուծում միայն մեկ հիմնադրամում: Քարոզչության հիմնադրամում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացվում է ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն քվեարկության օրվանից 20 օր և 10 օր առաջ, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո՝ 3-րդ օրը: Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է քարոզչության հիմնադրամ կատարել նվազագույն աշխատավարձի մինչև 100-ապատիկի չափով կամավոր մուծում:
6. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձանց՝ հիմնադրամների հաշվին մուծած գումարները, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված չափը գերազանցող մուծումները փոխանցվում են պետական բյուջե:
7. Արգելվում է քարոզչության ընթացքում հանրային ֆինանսների ու

պետական մարմինների միջոցների ու հնարավորությունների օգտագործումը, բացառությամբ սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, ինչպես նաև հիմնադրամից դուրս միջոցներ ծախսելը: Սույն մասի պահանջների խախտումը հանգեցնում է քվեարկության արդյունքների անվավերության:

8. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը եռօրյա պարբերականությամբ ԿԸՀ տեղեկանք է ներկայացնում հիմնադրամների ֆինանսական գործողությունների վերաբերյալ, որոնք դադարում են քվեարկությունից մեկ օր առաջ:

**Գ Լ ՈՒ Խ 6.**

***ԴԻՏՈՐԴՆԵՐ***

**Հոդված 21. Դիտորդական առաքելության իրավունքը և վստահված անձը**

1. Հանրաքվեի, ինչպես նաև քարոզչության ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության կուսակցությունները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հանրաքվեն անցկացվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների օրը,

2) միջազգային կազմակերպությունները,

3) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները,

4) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

2. Եթե հանրաքվեն անցկացվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների օրը, ապա սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կազմակերպությունները դիտորդական առաքելության իրավունք ունեն, եթե չեն աջակցում թեկնածուներին կամ կուսակցություններին:
3. Միջազգային կազմակերպություններին, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին և օտարերկրյա հասարակական կազմակերպություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հրավեր ուղարկելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով՝

համապետական ընտրությունների համար սահմանված կարգով:

4. Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝հանրաքվեի վերաբերյալ զեկույցները տեղադրվում են ԿԸՀ-ի պաշտոնական կայքում:
5. Դիտորդների հավատարմագրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
6. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները և հանրաքվե նախաձեռնողը կարող են ունենալ վստահված անձինք:
7. Վստահված անձ կարող են լինել միայն ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները: Վստահված անձ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում և ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, պրոբացիոն ծառայության ծառայողները, զինծառայողները, դիտորդները,հանրաքվեի հանձնաժողովի անդամները:
8. Հանրաքվե նշանակելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները, ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողը մինչև քվեարկության օրվանից 15 օր առաջ կարող են ԿԸՀ ներկայացնել գրավոր դիմում վստահված անձանց վկայականներ ստանալու համար: Հանձնաժողովը վկայականում նշում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցության, ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողի անվանումը և ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում տրամադրում է վկայականներ՝ կազմավորված տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցության, ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողի կողմից վկայականներում լրացվում են վստահված անձանց անունները, և վկայականները տրամադրվում են վստահված անձանց:

**Հոդված 22. Դիտորդների, վստահված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքները, պարտականություններն ու գործունեության երաշխիքները**

1. Հանրաքվեի, ինչպես նաև քարոզչության ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու կարգն ու պայմանները, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների հավատարմագրումը, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:
2. Հանրաքվեի, ինչպես նաև քարոզչության ժամանակ վստահված անձանց կարգավիճակը, գրանցումը, լիազորությունները, իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

**Գ Լ ՈՒ Խ 7.**

***ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ***

**Հոդված 23. Հանրաքվեի քվեարկության կարգը**

1. Հանրաքվեի քվեարկության նախապատրաստման և անցկացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

**Հոդված 24. Հանրաքվեի քվեաթերթիկը, քվեարկության ծրարը, կնիքները, դրոշմը և քվեատուփը**

1. 1. ԿԸՀ-ն քվեաթերթիկի նմուշը սահմանում է այնպես, որ հնարավոր լինի ապահովել քվեարկության գաղտնիությունը: Քվեաթերթիկը պետք է ներառի մատչելի և պարզ ծանուցում քվեաթերթիկի լրացման կարգի մասին:
2. Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քաղաքացի ստանում է մեկական քվեաթերթիկ և քվեարկության ծրար: Միաժամանակ երկու և ավելի հարցի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու դեպքում քաղաքացիներին տրվում են հանրաքվեի դրված հարցերի թվին համապատասխան թվով քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ: Քվեաթերթիկները և ծրարները պատրաստվում են այնպես, որ ակնհայտորեն տարբերվեն միմյանցից:
3. Քվեարկության ծրարը պատրաստվում է անթափանց թղթից: Քվեարկության ծրարի ձևը և չափերը սահմանում է ԿԸՀ այնպես, որ հնարավորություն ընձեռվի ծրարում գտնվող քվեաթերթիկի վրա փակցնելու ինքնասոսնձվող դրոշմանիշ: Ինքնասոսնձվող դրոշմանիշը պաշտպանիչ շերտերով տպարանային եղանակով պատրաստված դրոշմանիշ է, որի վրա նշված են ընտրության անվանման հապավումը, քվեարկության ամսաթիվը և ընտրական տեղամասի համարը: Ինքնասոսնձվող դրոշմանիշը ենթակա է հատուկ հաշվառման:
4. Քվեաթերթիկի հատման գծից վերև` ելունդի վրա, նշվում են քվեաթերթիկի հերթական համարը, իսկ հատման գծից ներքև` «ԱՅՈ» և «ՈՉ» բառերը` յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում` նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով: Քվեաթերթիկները տեղամասային հանձնաժողովներին հատկացվում են տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թվի մինչև երեք տոկոս ավելի քանակով` քվեարկության նախորդ օրը, բայց ոչ պակաս, քան հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թվից երկու քվեաթերթիկ ավելին:

5. Քվեաթերթիկների տպագրումն ապահովում է ԿԸՀ-ն: Քվեաթերթիկները տպագրվում են հանրաքվեի անցկացման օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ` լիազոր մարմնի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի վերաբերյալ քվեարկության օրվանից 10 օր առաջ տրամադրած տեղեկատվության հիման վրա:
6. Քվեարկության ծրարների պատրաստումն ապահովում էԿԸՀ-ը: Քվեարկության ծրարները տեղամասային հանձնաժողովին հատկացվում են քվեարկության նախորդ օրը:
7. Հանրաքվեի հանձնաժողովների կնիքների, դրոշմակնիքի և տեղամասային հանձնաժողովի անդամների անհատական կնիքների նմուշները հաստատում է ԿԸՀ-ն: Դրանք պատրաստվում են ԿԸՀ-ի պատվերով:
8. Տեղամասային հանձնաժողովի անդամը և վստահված անձը կարող են ունենալ դրոշմ: Տեղամասային հանձնաժողովի անդամը և վստահված անձը սեփական դրոշմը կարող են օգտագործել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում իրենց ստորագրության փոխարեն:
9. Հանրաքվեի քվեաթերթիկները, քվեարկության ծրարները և կնիքները հանձնելու, ինչպես նաև կնիքները վերադարձնելու կարգը սահմանվում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:
10. Քվեատուփի նմուշը (չափսերը) հաստատում է ԿԸՀ-ն: Տեղամասային կենտրոնում կարող են օգտագործվել մեկից ավելի քվեատուփեր` ԿԸՀ-ի սահմանած կարգով:

**Հոդված 25. Քվեարկության նախապատրաստումը**

1. Քվեարկության նախապատրաստումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
2. Տեղամասային կենտրոնում, քվեարկությանը մասնակցող անձանց և դիտորդների համար պետք է հասանելի լինեն`

1) Հանրաքվեի դրված հարցի տեքստը,

2) Հանրաքվեին դրված իրավական ակտի նախագծի` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը:

3. Եթե տվյալ տեղամասային կենտրոնում քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեն նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ապա սույն մասով նախատեսված փաստաթղթերը պետք է հասանելի լինեն նաև այդ ազգային փոքրամասնության համար հասկանալի լեզվով:
4. Քվեարկության խցիկը (սենյակը) պետք է կահավորված լինի այնպես, որ քաղաքացին կարողանա տեղամասային կենտրոնում ներկա գտնվող անձանցից գաղտնի լրացնել քվեաթերթիկը:

**Հոդված 26. Ձերբակալվածների, կալանավորվածների քվեարկության**

**նախապատրաստումն ու անցկացումը**

1. Զերբակալվածների, կալանավորվածների քվեարկության նախապատրաստման ու անցկացման, այդ թվում՝ տեղամասային կենտրոն մուտք գործելու,հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների գրանցման, քվեարկության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

**Հոդված 27. Քվեաթերթիկը լրացնելու կարգը**

1. Քվեարկության մասնակիցը, եթե համաձայն է ընդունել հանրաքվեի դրված հարցը, քվեաթերթիկում ԿԸՀ-ի սահմանած ձևով միատեսակ նշում է կատարում «ԱՅՈ» բառի դիմացի դատարկ քառանկյունում, իսկ եթե համաձայն չէ՝ «ՈՉ» բառի դիմացի դատարկ քառանկյունում:
2. Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քվեարկության մասնակիցն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ անձի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող մասնակցին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:
3. Եթե հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում:

**Հոդված 27. Քվեաթերթիկների վավերականությունը**

1. Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

1) միաժամանակ «ԱՅՈ» և «ՈՉ» բառերի դիմաց նշումներ է ներառում,

2) որևէ նշում չի ներառում,

3) բացի քվեարկության համար ԿԸՀ-ի սահմանած կամ դրան նմանվող նշանից, ներառում է այլ՝ քվեարկողի ինքնությունը բացահայտող նշում,

4) տեղամասային հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված կամ սեփական դրոշմով դրոշմված կամ անհատական կնիքով կնքված չէ,

5) ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե քվեարկությանը մասնակցողի մտադրությունը հստակ է և աներկբա:

2. Քվեաթերթիկը վավեր է, եթե առկա չեն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված` քվեաթերթիկի անվավերության հիմքերից որևէ մեկը:

**Հոդված 29. Չսահմանված նմուշի քվեարկության ծրարները, չսահմանված նմուշի քվեաթերթիկները**

1. Չսահմանված նմուշի քվեարկության ծրարները և չսահմանված նմուշի քվեաթերթիկները որոշվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

**Գ Լ ՈՒ Խ 8.**

***ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ԵՎ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ***

**Հոդված 30. Տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելու կարգը**

1. Տեղամասում հանրաքվեի քվեարկության արդյունքներն ամփոփվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
2. Հանրաքվեն այլ ընտրության կամ տեղականհանրաքվեի հետ նույն օրն անցկացվելու դեպքում տեղամասային հանձնաժողովն առաջին հերթին ամփոփում է հանրաքվեի քվեարկության արդյունքները:

**Հոդված 31. Տեղամասային հանձնաժողովի` քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը**

1. Տեղամասային հանձնաժողովը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների հաշվարկները, կազմում էհանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, դրանում նշելով`

1) տեղամասում հանրաքվեի մասնակիցների հիմնական ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը, յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում (այդ թվում` քվեարկության օրը հանրաքվեի տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում) ընդգրկված քաղաքացիների թվերը` առանձին-առանձին,

2) հանրաքվեի տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը, որը հավասար է հիմնական ցուցակում և

լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թվերի գումարին,

3) քվեարկության մասնակիցների թիվը (լրացվում է գրանցված և քվեաթերթիկներ ստացած քաղաքացիների ստորագրությունների թիվը),

4) տեղամասային հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը և ելունդների համարները (լրացնում է ընտրատարածքային հանձնաժողովը),

5) մարված քվեաթերթիկների (չօգտագործված և քվեարկությանը մասնակցած քաղաքացիների կողմից ոչ ճիշտ լրացված կամ վնասված և հետ տված քվեաթերթիկներ) ընդհանուր թիվը,

6) անվավեր քվեաթերթիկների թիվը,

7) «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկների թիվը,

8) «ՈՉ» քվեարկված քվեաթերթիկների թիվը,

9) քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը:

2. Արձանագրության կազմումը և ստորագրումը, տեղամասում դրա հրապարակումը, հանրաքվեի փաստաթղթերը փաթեթավորելը և ընտրատարածքային հանձնաժողովին ներկայացնելը իրականացվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգով և ժամկետներում:

**հոդված 32. Անճշտությունները որոշելու կարգը**

1. Անճշտությունների չափը հաշվարկվում և արձանագրվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

**Հոդված 33.ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏ**

1. Ընտրատարածքային հանձնաժողովում ստուգվում է հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները կազմելու վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով: Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

2. Ընտրատարածքային հանձնաժողովը հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալների մուտքագրումը համակարգիչ, ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգով և ժամկետներում:
3. Ընտրատարածքային հանձնաժողովը հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից 24 ժամ հետո ներկայացնում է ԿԸՀ:

4.Հանրաքվեի ժամանակ ընտրատարածքային հանձնաժողովն ընտրատարածքում քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում ԿԸՀ:

**հոդված 34. ԿԸՀ-ում հանրաքվեի արդյունքների ամփոփման կարգը**

1. ԿԸՀ-ն ընտրատարածքային հանձնաժողովներից ստացված՝ հանրաքվեի տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո, սույն հոդվածի պահանջներին համապատասխան, ամփոփում է հանրաքվեի քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք ու հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում այդ արդյունքները:

2.ԿԸՀ-ն քվեարկության օրվանից հետո՝ յոթերորդ օրը, հիմք ընդունելով հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ:

3. Քվեարկության արդյունքների մասին արձանագրությունում նշվում են՝

1) հանրաքվեի մասնակիցների հիմնական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը, լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թվերը՝ առանձին-առանձին,

2) հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը, որը հավասար է հիմնական ցուցակներում և լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թվերի գումարին,

3) քվեարկության մասնակիցների թիվը,

4) տեղամասային հանձնաժողովներին հատկացված քվեաթերթիկների թիվը և ելունդների համարները,

5) տեղամասային հանձնաժողովներում մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

6) անվավեր քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

7) «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

8) «ՈՉ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

9) քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների ընդհանուր թիվը,

10) անճշտությունների գումարային չափը:

4. Հանրաքվեի դեպքում անճշտությունների գումարային չափը հավասար է կազմավորվածհանրաքվեի բոլոր տեղամասերի անճշտությունների գումարային չափերի գումարին:

5.Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները: Արձանագրությունը կնքում է հանձնաժողովի նախագահը:

6. Հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է քվեարկության արդյունքների արձանագրության պատճենը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:
7. ԿԸՀ-ն քվեարկության օրվանից հետո՝ յոթերորդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է հանրաքվեի արդյունքները և ընդունում որոշում հանրաքվեի արդյունքների վերաբերյալ:

**հոդված 35. Հանրաքվեի արդյունքների ամփոփումը**

1. ԿԸՀ-ն սույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է հանրաքվեի արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը՝

1) հանրաքվեի դրված նախագծի ընդունման մասին,

2) հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին,

3) հանրաքվեի դրված նախագծի չընդունման մասին,

4) հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու և նոր քվեարկություն նշանակելու մասին:

2. Հանրաքվեի դրված հարցը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:
3. Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է չընդունված, եթե ապահովված չեն սույն հոդվածի 2-րդ մասի պահանջները:
4. Եթե քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել հանրաքվեի արդյունքների վրա, ապա ԿԸՀ-ն որոշում է ընդունում հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները:
5. Եթե հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ընթացքում կամ հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու ընթացքում տեղի են ունեցել սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել հանրաքվեի արդյունքների վրա, ապա ԿԸՀ-ը որոշում է ընդունում հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու մասին և նշանակում է նոր քվեարկություն:
6. Հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերով դիմում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան կարող է ներկայացվել հանրաքվեի արդյունքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո` մինչև հինգերորդ օրը, մինչև ժամը 18.00-ն:
7. Հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակվում և անցկացվում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում: Նոր քվեարկությունն անցկացվում է հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 15, և ոչ ուշ, քան 30 օր հետո սույն օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 36. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կամ դրանում փոփոխությունների և հանրաքվեով ընդունված օրենքների ուժի մեջ մտնելը**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը կամ դրանում փոփոխությունները և հանրաքվեով ընդունված օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հանրաքվեով ընդունված իրավական ակտի հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե հանրաքվեով ընդունված

ակտով այլ բան նախատեսված չէ:

2. «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակումն իրականացվում է ԿԸՀ-ի՝ հանրաքվեի դրված նախագծի ընդունման մասին որոշումը հրապարակվելուց հետո՝ ութերորդ օրը, եթե ԿԸՀ-ի որոշումը չի բողոքարկվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան: Եթե ԿԸՀ-ի՝ հանրաքվեի արդյունքներով ընդունված որոշումը բողոքարկվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան, ապա «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հանրաքվեով ընդունված իրավական ակտի հրապարակումն իրականացվում է հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումն ուժի մեջ թողնելու կամ հանրաքվեի դրված նախագիծն ընդունված համարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումից հետո ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում:

3.Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են միայն հանրաքվեով:

**Հոդված 37. Հանրաքվեի փաստաթղթերի պահպանումը**

1.Հանրաքվեի արդյունքների մասին ԿԸՀ-ի որոշումն ուժի մեջ մտնելուց, իսկ հանրաքվեի արդյունքները բողոքարկվելու դեպքում դրա վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հանրաքվեի փաստաթղթերը պահպանության են հանձնվում Հայաստանի ազգային արխիվ՝ սահմանված կարգով պահպանելու համար։

2. Հանրաքվեի փաստաթղթերը պահպանվում են առնվազն տասը տարի:

**Գ Լ ՈՒ Խ 9.**

***ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ***

**Հոդված 38.Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթները խախտելու համար**

1. Սույն օրենքի դրույթների խախտումն առաջ է բերում ընտրական իրավունքի դեմ կատարված իրավախախտումների համար օրենքով սահմանված պատասխանատվություն:

**Գ Լ ՈՒ Խ 10.**

## *ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 39. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը և դրա փոփոխությունների գործողությունը ժամանակի մեջ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 12-ի ՀՕ-225 օրենքը:
3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանում կատարվող փոփոխությունները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նշանակված հանրաքվեների վրա տարածվում են միայն այն դեպքում, եթե օրենքի փոփոխություններն ուժի մեջ են մտել հանրաքվե անցկացնելու մասին որոշումը կայացնելուց առնվազն վեց ամիս առաջ: